«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակները ու իրականացման ուղիները

Առարկան՝դասվար

Հետազոտող ուսուցիչ՝Զարինե Սարիբեկյան

Ուսումնական հաստատություն՝ՆԺԿ

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն ---------- 2

Խնդիրներ,որոնք առաջանում են նախաայբբենական շրջանում-------- 3

Ունկնդրում ---------- 5

Գրական ունկընդրում ---------- 6

Գրական ունկնդրման դասեր ---------- 7

Զննականության դերը գրաճանաչության ուսուցման գործընթացում -- 9

Զննականության սկզբունքի կիրառումը լեզվական նախագիտելիքների ուսուցման գործընթացում ---------- 10

Եզրակացություն ---------- 17

Գրական ակնարկ ---------- 19

Ներածություն

Այսօր վեց տարեկան երեխան էլ է տիրապետում համակարգչային տարրական գիտելիքների: Աշխարհին նա հաղորդակցվում է նաև համացանցի միջոցով: Նորագույն տեխնոլոգիաները դարձել են մեր կյանքի անբաժան մասը, և անհնար է այլևս մեր առօրյան պատկերացնել առանց դրանց: Սա կյանքի առաջընթացն է: Սակայն առկա է նաև տվյալ երևույթի բացասական կողմը. երկրորդ պլան է մղվել գիրքը, նվազել է գրքի նկատմամբ հետաքրքրությունը: Պետք է նկատել, որ վեց տարեկան և դրանից ցածր տարիք ունեցողները գրականությանը հաղորդակցվելու առավել շատ փորձ ունեն (հեքիաթ, ոտանավոր), քանի որ մեծահասակները նախադպրոցական տարիքից երեխաների համար շատ են կարդում հեքիաթներ և սովորեցնում ոտանավորներ: Երեխայի հետաքրքրությունը չի թուլանում նաև դպրոց հաճախելու առաջին տարիներին:Ժամանակն առաջ է շարժվում: Թե տանը, թե՝ դպրոցում փոխվում է ամեն բան. փոփոխվում են նաև ուսուցման ու դաստիարակության խնդիրները: Ժամանակակից երեխաների մտածողությունը, ցանկություններն ու հետաքրքրությունները չեն համապատասխանում անցյալ ժամանակով ապրող մանկավարժին: Հետևաբար, նրա կողմից գործադրվող ուսուցման մեթոդներն արդասաբեր չեն լինի: Այսօր մենք խնդիր ունենք, որ ուսուցիչը գիտակցաբար քայլի արդիականության հետ, առաջնորդվի ժամանակի պահանջներով: Երեխաներին պետք է ուսուցանել և դաստիարակել առանց հարկադրանքի և ճնշումի, քանի որ բռնությունն առաջ է բերում հիասթափություն, անտարբերություն և ատելություն: Հարկավոր է դպրոցը դարձնել մանուկների աշխատելու և սովորելու համար առավել հաճելի ու նպաստավոր վայր: Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչն ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական բարձր արժանիքներ: Նա պետք է տիրապետի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդներին, զբաղվի ինքնակրթությամբ:

Փորձարարական մաս Հետազոտության փորձարարական մասն են կազմում հայ երեխաներին գրաճանաչ դարձնելու մեթոդների և դրանց բաղադրամասերի պատմական զարգացման ընթացքն է՝ լեզվական, հոգեբանամանկավարժական այն սկզբունքները, որոնք ընկած են ժամանակակից գրաճանաչության մեթոդիկայի հիմքում:

Խնդիրներ,որոնք առաջանում են նախադպրոցական շրջանում

Ուսուցչի խնդիրն է՝ հենց նախադպրոցական շրջանից աշակերտի մեջ հետաքրքրություն սերմանել գրքի և ընթերցանության հանդեպ: Վաղ տարիքից մայրիկները երեխաներին քնեցնելիս կամ նրանց հետ խաղալիս պատմում ու կարդում են հեքիաթներ, ցուցադրում այդ գրքերի գունագեղ նկարազարդումները: Առաջին դասարանցին սիրում է ունկնդրել գեղարվեստական ստեղծագործություններ և դրանք նկարազարդել յուրովի:

Գրական ունկնդրման ժամերին հարկավոր է առաջին հերթին ուշադրություն դարձնել լեզվի ճիշտ ու գրագետ գործածությանը: Ունկնդրման միջոցով փոքրիկը կբացահայտի գեղարվեստական խոսքի հմայքն ու կախարդական ուժը:

Հեքիաթները, բանաստեղծությունները, փոքրիկ պատումները հետաքրքիր ու բովանդակալից են դարձնում մայրենիի ժամերը: Երեխաները հաճույքով են ընդգրկվում բեմականացումների նախապատրաստման գործընթացի մեջ, արտասանում են, երգում և նկարում:

Մի քանի տարի առաջ ուսուցիչն ինքն էր փնտրում և ընտրում ունկնդրման համար նյութեր: Այսօր ուսուցիչներին օգնական են բազմապիսի ամսագրեր, ժողովածուներ, էլեկտրոնային շտեմարաններ, գրական ունկնդրման համար նախատեսված գրքեր: Հաղորդակցական կարողությունների զարգացման տեսանկյունից խիստ կարևոր է ունկնդրելու մշակույթի ձևավորումը:

Արդյունավետ հաղորդակցությունը ենթադրում է ոչ միայն ճիշտ, տեղին, հետաքրքիր ու դիպուկ արտահայտվել, այլև լսել խոսակցին, ունկնդրել, ընկալել, հասկանալ այն, ինչ ասվում է, այսինքն՝ դառնալ ակտիվ ունկնդիրներ: Աշակերտներին անհրաժեշտ է սովորեցնել նաև լսելիս ուշադիր և ակտիվ լինել, այսինքն՝ իրապես լսել զրուցակցին և պատասխան խոսքը կառուցել նրա ասածի հիմքով:

Նախայբբենական և տառուսուցման ընթացքում ուսուցիչը ցույց է տալիս ընթերցվող գիրքը, կարդում վերնագիրը, հեղինակի անունը: Աշակերտները կրկնում են: Հեքիաթն ընթերցելուց հետո ուսուցիչը գիրքը փոխանցում է աշակերտներին: Նրանք ուսումնասիրում են, թերթում, դիտում կազմը, նկարազարդումները:

Դասի ավարտին ուսուցիչը հանձնարարում է մտապահել ստեղծագործության վերնագիրը, անձնական գրադարանում փնտրել, գտնել և դպրոց բերել նմանատիպ այլ գրքեր:

Ունկնդրում

Ունկնդրումը ենթադրում է սովորողի կողմից մի շարք հիմնական կարողությունների տիրապետում:

1. Ընկալել և հասկանալ ունկնդրած տեքստի հիմնական բովանդակությունը:
2. Վեր հանել անհրաժեշտ տեղեկատվությունը:
3. Ամբողջապես ըմբռնել ունկնդրվող բնագրի մանրամասները:

Ունկնդրման ունակություններին վերաբերող պահանջները փոխվում են դասարանից դասարան՝ ըստ լեզվական նյութի բարդացման և ընկալման պահանջների:

Ակտիվ ունկնդրման կարողությունների զարգացումը կհանգեցնի մի քանի խնդրի լուծման: Դրանք են.

- Ունկնդրումը վերածել խոսքային գործունեության անհրաժեշտ բաղադրամասի և երկկողմանի գործընթացի (ունկնդրման համար կարևոր են դիմախաղը, շարժումները և կեցվածքը):
- Ունկնդրման նպատակի բացահայտումը (ունկնդրման ակտիվության ապահովումը, այսինքն՝ ըմբռնումով ունկնդրումը):
- Հասկանալ ունկնդրված տեքստը (որոշել թեման և տեքստի հիմնական գաղափարը):
- Ունկնդրելիս ազատ լինել հարցեր առաջադրելու՝ լավ չհասկացածի կամ չընկալածի շուրջ:
- Ուշադրություն դարձնել խոսքի ընդհանուր բովանդակությանը և ոչ խոսքային միջոցներին (ձայնի հնչերանգը, տեմպը, բարձրությունը, դիմախաղը, շարժումները, կեցվածքը):
- Ստուգել բանավոր խոսքն ունկնդրելու, ընկալելու և մտապահելու կարողությունները:

Գրական ունկընդրում

Գրական ունկնդրման նպատակը սովորողներին գրական տեքստի ընկալմանը վարժեցնելն է: Դա վերաբերում է գեղարվեստական ընկալմանը, որին մասնակցում են հոգեբանական մի շարք գործընթացներ՝ խոսք, երևակայություն, մտածողություն: Գեղարվեստական ընկալումը ոչ միայն ստեղծագործությունը լսելու կարողությունն է, այլև ենթատեքստը, գործող անձանց փոխհարաբերությունները հոգու աչքերով և ականջներով լսելու և հասկանալու կարողությունը:

Վեցամյա դպրոցականի համար գրքի հետ նման շփումը դառնում է բարոյականության և բարեկրթության ձևավորման առաջին լուրջ դպրոցը:

Ինքնուրույն ընթերցողական ունակությունների ձևավորումն սկսվում է ուսուցման առաջին օրվանից և իրագործվում է փուլ առ փուլ.

I փուլ (նախապատրաստական). առաջին դասարան, երբ աշակերտը նոր է գրաճանաչ դառնում:

II փուլ (հիմնական). II – IV դասարաններ

Առաջին փուլում անհրաժեշտ է առաջին դասարանցիների մեջ արթնացնել ամեն օր, յուրաքանչյուր ազատ ժամ գիրք, թերթ, կարդալու ցանկություն և ձգտում:

Առաջին դասարանում գրական ունկնդրման դասերը պլանավորելիս պետք է հաշվի առնել՝

1. սովորողների պատրաստվածության մակարդակը,
2. միջավայրի առանձնահատկությունները /ծնողների սոցիալական վիճակը, մշակույթի օջախները, դասարանի և դպրոցի գրական ֆոնդը/,
3. երեխաների հետաքրքրությունների շրջանակը:

Գրական ունկնդրման դասերին աշակերտները լինում են պասիվ և ակտիվ ունկնդրի դերում: Պասիվ ունկնդրման ժամանակ ակտիվ ընթերցանության ձևավորումը հետաձգվում է: Ի՞նչ պետք է անել, որպեսզի չբախվենք նման դժվարությունների:

Գրական ունկնդրման դասեր

Գրական ունկնդրման դասերը պլանավորելիս պետք է նկատառել աշխատանքի հետևյալ տեսակները.

1. Խոսքային վարժություններ. դասն սկսել 2 – 3 րոպե տևողությամբ խոսքային վարժություններով, քանի որ դասամիջոցից հետո աշակերտները դժվարությամբ են անցում կատարում ուսումնական գործունեության: Խոսքային վարժությունները աշակերտներին ներգրավում են ակտիվ մտավոր աշխատանքի մեջ:
2. Ծանոթություն նոր նյութին. Յուրաքանչյուր գրական ունկնդրման դասի ընթացքում աշակերտները ծանոթանում են նոր ստեղծագործության: Ուսուցիչը նյութը պետք է ներկայացնի հնարավորինս արտահայտիչ:
3. Գրական ստեղծագործության ընկալման գործընթացը. Վեց տարեկան երեխայի համար առավել հեշտ է յուրացնել և ընկալել այնպիսի դրվագներ, որոնք իրեն ծանոթ են և իր համար ուշագրավ: Մինչդեռ նա դժվարությամբ է ընկալում նոր ներկայացվող ստեղծագործության հերոսի գործողությունները, դրանց դրդապատճառները: Այս դեպքում ուսուցչի խնդիրն է՝ աշակերտներին ճիշտ և հստակ ուղղորդել դեպի անծանոթ իրավիճակներ, որպեսզի նրանք կարողանան ներթափանցել տվյալ հերոսի ներաշխարհը, ընկալել նրա վարքագծի դրդապատճառները:
4. Ստեղծագործության բովանդակության ընկալմանը միտված աշխատանքներ:

Ստեղծագործության բովանդակության ընկալմանն ուղղված աշխատանքը պետք է անցկացնել միմիայն երեխաների սկզբնական ընկալումից հետո: Աշակերտներն ուսուցչի օգնությամբ կազմում են ստեղծագործությունը վերարտադրելու պլան–սխեմա՝ պահպանելով գործողությունների զարգացման ընթացքը:

Ստեղծագործության բովանդակության վերարտադրումը դժվար տրվող հմտություններից է, քանի որ այն իր մեջ ներառում է բովանդակային ընկալում, մտքերի արտահայտում և բնագրին համապատասխան բառերի կիրառում: Վեց տարեկանը դժվարանում է հաղորդվող նյութը վերարտադրել համառոտ կամ ընտրովի:

Ստորև առանձնացնում ենք մի քանի միջոց, որոնք վեց տարեկան փոքրիկին կօգնեն ճիշտ և մատչելի վերարտադրել տեքստը:

Որպեսզի հեղինակի կողմից օգտագործված բառերը ամրակայվեն աշակերտների հիշողության մեջ և օգտագործվեն իրենց բանավոր խոսքում, կարելի է կատարել հետևյալ աշխատանքները.

- Անհասկանալի բառերի բացատրություն, բառերի ճիշտ արտասանություն:
- Ունկնդրած ստեղծագործության այն բառերի արտասանությունը, որոնք մնացել են հիշողության մեջ կամ երեխաներին դուր են եկել:
- Ստեղծագործության նորածանոթ բառերով բնութագրել կամ նկարագրել հերոսներին (ինչպիսին են նրանք պատկերացնում հերոսների արտաքինը, ինչպես են նրանք խոսում):
- Երկխոսությունների միջոցով, դերային խաղով, մնջախաղով ներկայացնել ստեղծագործությունը:

Դասի ամփոփումը կատարվում է տարբեր եղանակներով. օրինակ՝ ստեղծել փոքրիկ գրադարան, կատարել նկարազարդումներ, վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը, հաջորդաբար ներկայացնել գործողությունները և հերոսներին դերային փոքրիկ խաղերի միջոցով:

Զննականության դերը գրաճանաչության ուսուցման գործընթացում

Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում չափազանց կարևոր տեղ ու դեր ունի զննականության սկզբունքը, որն այսօր շատ կարևորվում է: Այս հանգամանքը ամենայն հավանականությամբ պայմանավորված է այսօրվա խայտաբղետ ու հարափոփոխ իրականությամբ, որի մեջ ապրող երեխային գրքին, գրականությանն ու գիտելիքին կապելու համար անհրաժեշտ է ապահովել ուսումնական համանման բազմաձև, վառ ու պատկերավոր միջավայր: Մեթոդիկայում ամենատարբեր մոտեցումներ են եղել ուսուցման զննականության անհրաժեշտության, կիրառման չափի ու դրսևորման ձևերի վերաբերյալ:

Գրաճանաչության ուսուցման գործընթացը բավական բարդ և բազմաբովանդակ գործընթաց է, որի ընթացքում ձևավորվում են տարբեր կարողություններ, ձեռք բերվում տարաբնույթ գիտելիքներ: Մեր ուսումնասիրությունը նվիրված է դրանցից երկուսի՝ լեզվական նախագիտելիքների ուսուցման և կարդալու կարողությունների արդյունավետ ձևավորման գործընթացներում զննականության կատարած դերի ուսումնասիրությանը:

Լեզվական նախագիտելիքների, ինչպես նաև կարդալու կարողությունների ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման, նյութի ընկալման մակարդակի բարձրացման առումով շատ կարևոր է զննականության ապահովումը: Երեխայի համար լեզվական վերացական հասկացություններն առավել շոշափելի դարձնելը, նյութի մատուցման մատչելիությունն ու զննականությունը, տրամաբանական կուռ կառուցվածքը կարևոր են լեզվական համակարգը սկզբիցսեթ ճիշտ ընկալել տալու և ամուր հիմք ստեղծելու համար:

Լեզվական միավորները վերացական են, և երեխաներին դրանք ընկալելի դարձնելու համար մեթոդիկայում տարբեր միջոցներ են գործածվում, որոնց մեջ կարևորագույն տեղ է հատկացվում զննականությունը: Ահա թե ինչու մեթոդիստները լեզվական գիտելիքների ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման համար կիրառում են զննականություն ապահովող տարբեր միջոցներ՝ գծապատկերներ, նկարներ, զանազան կաղապարներ, գունային տարբերակումներ ու ընդգծումներ և այլն:

Ներկայացնենք, թե զննականության կիրառման ի՛նչ ձևեր ենք առանձնացրել Ա.Քյուրքչյանի և Լ.Տեր-Գրիգորյանի՝ հանրակրթական դպրոցներում գործածվող «Այբբենարանում» և հարակից ուսումնաօժանդակ նյութերում:

Զննականության սկզբունքի կիրառումը լեզվական նախագիտելիքների ուսուցման գործընթացում

Առաջին դասարանում՝ գրաճանաչության ուսուցման նախաայբբենական փուլում, առաջին անգամ ներմուծվում են լեզվական միավորները, որոնց նյութականացման համար Ա.Տեր-Գրիգորյանը ներմուծել է գծային մոդելների կամ գծապատկերների համակարգը: Դրանց մեջ լեզվական յուրաքանչյուր միավոր՝ խոսք /կամ պատմություն/, նախադասություն, բառ, խոսքային միավոր՝ վանկ, հնչյուն՝ իր տարատեսակներով՝ ձայնավոր և բաղաձայն, ունի իր խորհրդանիշ գծապատկերը: Ընդ որում՝ վերջին երկուսի զանազանման համար ընտրվել է գունային տարբերակման եղանակը. ձայնավորի խորհրդանիշը կարմիրն է, բաղաձայնինը՝ կապույտը: Այսպիսով գույնը ևս դառնում է ուսուցման զննականություն ապահովող միջոց:



Գրուսուցման ժամանակ ներմուծվում է նաև կանաչ գույնը, որը դառնում է ե, ո, և երկինչյուն և եռահնչյուն տառերի խորհրդանիշը: Այս մասին տեղեկություն է տրվում «Այբբենարանի» վերջում՝ «Խորհրդանիշներ» վերնագրով, և, իհարկե, մեթոդական ուղեցույցում: Ընդ որում՝ այս գույները գործածվում են և՛ նախաայբբենական շրջանում՝ վանդակների գունավորման տեսքով, և՛ հետագայում՝ տառուսուցման ժամանակ՝ գունավոր տառերի տեսքով: Օրինակ՝ «Այբբենարանի» 4-րդ էջում պատկերված է պատմության գծապատկերը, 8-րդ էջում՝ նախադասության, բառի,11-րդ էջում՝ վանկի, 24-րդ էջում՝ հնչյունի (ձայնավոր և բաղաձայն):

Ա. Քյուրքչյանի և Լ. Տեր-Գրիգորյանի «Այբբենարանի» 74 և 76 էջերում ներառված են ԵԵ և ՈՈ տառերի՝ վերը ասվածի համապատասխան գրության ձևերը, որտեղ գույների կիրառությունն օգնում է երեխային հասկանալու, որ ե-ն ու ո-ն տառեր են, որոնք կազմված են մեկական ձայնավորից և մեկական բաղաձայնից. դրանք երկինչյուն տառեր են, հետևաբար ներկայացված են ոչ թե կարմիր կամ կապույտ, այլ մեկ ուրիշ գույնով՝ կանաչով:

Ա. Քյուրքչյանի և Լ. Տեր-Գրիգորյանի <> դասագրքի 15-րդ էջում ներառված է ԵԵ-ի բառաշարքը.



Կամ ժ-շ բաղաձայնների ամրապնդման վարժության մեջ պահպանվել է բաղաձայնը՝ տվյալ դեպքում ուսուցողական արժեք ունեցող բաղաձայնը կապույտով մատուցելու սկզբունքը:

Գաղտնավանկի ը-ի խորհրդանիշը ստվերագծված կարմիր վանդակն է. ը-ն ձայնավոր է, ուրեմն պետք է կարմիր լինի, իսկ ստվերագծված է, քանի որ լիարժեք չէ, այսինքն՝ լսվող, բայց չգրվող հնչյուն է խորհրդանշվում այդ վանդակով: Ահա այսպես է ներկայացված այն քննության առնված «Այբբենարանի» 59-րդ էջում:

Այս խորհրդանիշերը պետք է պահպանվեն ոչ միայն գրաճանաչության ուսուցման շրջանում, այլև դրանից հետո, որպեսզի զննականության գունային տարբերակման կիրառությունը երեխաների համար նույնը լինի և շփոթության ու

թյուրըմբռնման պատճառ չդառնա: Եվ իսկապես, Ա.Քյուրքչյանի և Լ.Տեր-Գրիգորյանի դասագրքերում՝ «Այբբենարան»,«Մայրենի 1», «Մայրենի 2» դասագրքերում և ուսումնաօժանդակ ձեռնարկներում գույների պայմանական այս համակարգը պահպանված է և համապատասխանում է «Այբբենարանում» ընտրված սկզբունքներին: Այսպես, Ա. Քյուրքչյանի և Լ. Տեր-Գրիգորյանի «Մայրենի 1», դասագրքում զետեղված գծային մոդելները նույնությամբ համապատասխանում են «Այբբենարանի» խորհրդանիշներին.



<<Մայրենի 1>>-ի 31-րդ էջում.

«Սովորենք խաղալով» պաստառներում ևս դրանք պահպանված են. Գծապատկերների գործածությունը ևս «Այբբենարանում» կիրառվում է շարունակաբար՝ հիմնականում՝

հնչյունային վերլուծության, հնչյունի տեղը բառի կամ վանկի մեջ որոշելու.

բ/ կարդալու կարողությունների ձևավորման՝ հատկապես երկար բառերը բառի վանկային կաղապարով կարդալ սովորեցնելու նպատակով:

Այսպես, Ա.Քյուրքչյանի և Լ.Տեր-Գրիգորյանի «Մայրենի 1», 32,33,34,35, 36-րդ էջերում տեղ գտած գծապատկերները հիմնականում վերլուծական-համադրական աշխատանքի նպատակ ունեն՝ նոր անցած հնչյուն-տառի դիրքը բառի մեջ գտնելու, վանկերի քանակը որոշելու, վանկերի կազմությունը, ձայնավոր-բաղաձայն հարաբերությունը ճշտելու և այդ ամենը համադրելու, ապա նաև կարդալու նախնական կարողության ձևավորման: Օրինակ՝

Մինչդեռ 45, 55, 59, 60-րդ էջերում տրված գծապատկերը և դրանց համանման գործածությունները կարդալու կաղապարի արժեք ունեն, երբ գծապատկեր-կաղա- 11 պարի ներքևում տրվում է այդ կազմությունը և այդ կաղապարով կարդացվող բառերի շարք: Գրաճանաչության փուլում գծապատկերներով աշխատանքներ կան նաև գրելու համար նախատեսված «Այբբենարանին» կից տետրերում, դրանք լայնորեն առաջարկվում են նաև Ա.Քյուրքչյանի և Լ.Տեր-Գրիգորյանի «Այբբենարանի» պաստառների հավաքածուում ընդգրկված աշխատանքներում՝ որոնք թե՛ վանկային, թե հնչյունային վերլուծության կատարելու կարողությունների կատարելագործման հնարավորություն են ընձեռում:

Որպես զննականություն ապահովող միջոց հարկ է առանձնացնել նաև նկարն ու նկարազարդումը՝ թե՛ առարկայական նկարները, թե՛ նկար-նախադասությունները և թե՛ նկար-պատմությունները:

Ընդ որում՝ նկարներն իրենց ուրույն դերն են կատարում և՛ լեզվական նախագիտելիքների ուսուցման, և՛ կարդալու կարողությունների ձևավորման գործընթացներում: Նկարներն «Այբբենարանում», իհարկե, ունեն բազմապիսի գործառույթներ, ինչպես՝

ա/ չգրված առարկայի, գործողության, պատմության ցուցադրություն,

բ/ գրված բառի, ամբողջ բնագրի կամ բնագրի չգրված հատվածը լրացնող կտորի ցուցադրություն,

գ/ խաղի իլյուստրացիա,

դ/ժողովրդական մանրապատում ստեղծագործության իլյուստրացի (հուշաղ, գուշակելուն կամ ընկալելուն նպաստող) և այլն:

Դրանք ծառայում են ոչ միայն լեզվական միավորները ներմուծելուն և ուսուցանելուն կամ կարդալու կարողությունների ձևավորմանը, այլև բառապաշարի հարստացմանը, պատմելու կարողությունների զարգացմանը, խոսքի զարգացմանը լայն առումով, տրամաբանական մտածողության զարգացմանը, ստեղծագործական մտածողության զարգացմանը և այլն: Սակայն մենք մեր հետազոտության շրջանակներում կանդրադառնանք միայն լեզվական նախագիտելիքների ուսուցման և կարդալու կարողությունների ձևավորման գործընթացում նկարների ունեցած դերին:

Լեզվական նախագիտելիքների ներմուծման և ընդհանրապես ուսուցման գործընթացում նկարն առաջնային դեր է կատարում, քանի որ գծապատկերների հետ միասին նյութականացնում է համապատասխան լեզվական միավորը. Եթե գծապատկերը միավորի նշանն է լեզվաբանական առումով (բառ, վանկ, հնչյուն և այլն), ապա նկարը նյութականացնում է բառի իմաստը, նախադասության միտքը, պատմության բովանդակությունը, քանի որ գծապատկերն ինքը բովանդակություն չունի:

1. Նկար-պատմություն
2. Նկար-նախադասություններ
3. Նկար-բառեր Կարդալու կարողությունների ձևավորման գործընթացում նույնպես նկարների կիրառությունը կարող է որոշակի դեր կատարել և քննության առնված դասագրքում այդ հնարավորություններն օգտագործված են.

1. բառակապակցության, նախադասության կամ բնագրի մեջ չանցած տառով բառ կարդալու ժամանակ նկարը կարող է փոխարինել բառին:
2. լեզվական որևէ երևույթ ուսուցանելու ժամանակ ևս նկարը կարող է փոխարինել գրված բառին:
3. նկարի կիրառությունը չանցած տառով բառ գործածելը և կարդալը նպաստում է բնագիրը ընթերցելիս վերջավորությունները նկատել և կարդալ սովորելուն:

Եզրակացություն

Խոսքի ձևավորման, գրաճանաչության զարգացման, գրագիտության ուսուցման ցուցանիշներ են հետևյալ ունակությունները՝ ուշադրությունը սևեռել խոսքային խնդրին, ազատ կազմել մտքերը, մտածել,գնայատել խոսքը: Էլկոնինը իր ուսումնասիրություններում եկել է այն եզրահանգման, որ կարդալու ուսուցումն առավել հեշտ է բառերի վանկային վերլուծություն կատարելով, քանի որ վանկը բնական արտահայտչականության միավորն է: Կարդալու ընթացքում վանկատումը դժվարություն չի առաջացնում:

Հայ գիրը հնչյունատառային է: Այն հստակ արտահայտում է խոսքը: Կարդալու հոգեբանական մեխանիզմը հետևյալն է. սկզբնական փուլը բառի հնչյունային կողմի և տառային մոդելի գիտակցման գործընթացն է: Այն որոշում է գրաճանաչության ուսուցման ուղին՝ տառերի հնչյունային նշանակության ուսումնասիրությունից մինչև

խոսքի հնչյունային կողմի վերլուծա համադրական գործընթացը։ Այսօր կիրառվում են Էլկոնինի մեթոդը,Կիրյուշկինի, Շանկոյի, Գորեցկու հնչյունավանկային մեթոդները։

Այս մեթոդների հիմքում ընկած է կարդալու տեսակետային սկզբունքը, օրինակ՝ տուն, տար, տիր, տեղ բառերի մեջ «տ» հնչյունն իր արտաբերումը փոխում է՝ կախված նրանից, թե ինչ հնչյուն է իրենից հետո։ Երեխան պետք է կարողանա ճիշտ արտաբրել բաղաձայն և ձայնավոր հնչյունները բառերի մեջ։ Կարդալու մեխանիզմի վերլուծությունը ցույց է տալիս , որ անհրաժեշտ է մեծ նշանակություն տալ երեխայի հնչյունային լսողության զարգացմանը, որը մարդկային խոսքի հնչյուններն ընկալելու ընդունակություն է։

Մանկան խոսքի զարգացման մի շարք ուսումնասիրությունները \Գվոզդև, Շվաչկին, Լյամինա/ ցույց են տվել, որ հնչյունային խոսքը շատ վաղ է զարգանում։ 2 տարեկան երեխան արդեն որոշակիորեն տիրապետում է մայրենի լեզվին, իսկ 5 տարեկան երեխան տիրապետում է խոսքի հնչյոննային կողմին, և հենց այս տարիքն էլ կարելի է համարել բարենպաստ տառաճանաչության համար։ Գրաճանաչության զարգացումը տեղի է ունենում ոչ միայն ավագ տարիքում, այլ ողջ նախադպրոցական մանկության շրջանում:

- 3-4 տարեկանում ձևավորվում է բառի հնչարտաբերումը;
- 4-5 տարեկանում երեխան գործնականում ծանոթանում է «բառ» և «հնչյուն» տերմիններին, դրանք կարողանում է կիրառել վարժությունների, խոսքային, բառային, խաղերի ընթացքում։ Երեխան ծանոթանում է կարճ բառերին, ձայնավոր և բաղաձայ հնչյուններին:
- 5-6 տարեկան երեխային սովորեցնում են կատարել բառի հնչյունային վերլուծություն, տեղին կիրառել սովորած տերմինները:
- «Բառ» տերմինը երեխան յուրացնում է հաղորդակցման ընթացքում, բառապաշարի ակտիվացման, հարստացման միջոցավ։ Դաստիարակը պետք է հաճախակի կրկնի հետևյալ արտահայտությունները. «Լսիր, ես ինչպես եմ արտասանում այս բառը», « Ճիշտ արտասանիր այս բառը» և այլն։ Կարելի է օգտվել գրական ստեղծգործություններից, հեքիաթներից, խաղերից:

Գրական ակնարկ

1. Պետրոսյան Ա. ս., Դպրոցում գործող այբբենարանները, Նրանց մանկավարժական հիմունքները, ժող. «Հայ գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի թեզիսներ, - Եր., «Համալսարան», 2005, էջ 80-82:
2. Պետրոսյան ս. ս., Սակավակազմ դպրոցների հիմնախնդրի շուրջ, «Մանկավարժական միտք», 2008, հ. 2-3, էջ 94-104:
3. Պետրոսյան ս. ս., Անձնակողմնորոշիչ դիրքորոշման և բազմաբնույթ մտածողության դրույթների հիման վրա իրականացվող դասի պլան-սեղմագրի մասին, , Ստեփանակերտ, 2008, 123-130 :
4. Պետրոսյան Ա. Ա., Վեց տարեկաններ, նոր ծրագիր և ուսուցչին ներկայացվող նոր պահանջներ, «Մանկավարժական միտք», 2009, հ. 1-2, էջ 136-145 :